

զան Արքեղիոկոպոսին ի կողմանէ Փաղովին՝ Ս. Երուսաղէմայ վա-
նուց Պատրիարք է հռչակում։ յետոյ Երեսիխաններից մի պատ-
գամաւորութիւն Պատրիարքարան գնալով՝ յայտնումէ Արքազան
Պատրիարքին ընտրութեան հետեանքը, և Նորին Ամենապա-
տութեան Երուսաղէմայ պատրիարք ընտրուելը։

Ազօթենք առ Աստուած, որ Նորին Ամենապատութիւն Տէր
Յարութիւն Արքազան Պատրիարք զօրացեալ Տերամք փառու որ
կայուցանէ իրան հաւատացած նոր պատրիարքական Աթոռոյ
դժուարին և ճանրատար գործը։

Ամսոյս 17 ին, Երեքշաբաթի օրը, Վեհափառ Տէր Մակար Արքազ-
նագոյն Կաթուղիկոսը բարեհաճեց այցելել ձեմարանին։ յուսա-
գրեց, քաջալերեց և օրչնեց աշակերտներին, ուսուցաց և այլ
պաշտօնավարաց, այցելեց դասարանները, ննջարանները, հիւան-
դանոցը, գրադարանը և այն։ Ահճամք նկատելով ամեն բան՝
տնօրինեց ինչ որ հարկաւորն է, յորդորելով բոլորին ըստ իւրա-
քանչիւր աստիճանի՝ ճանայել իրանց կոչման պարտիքը և ան-
թերի կատարելով՝ փառաւորել թէ ձեմարանի անունը և թէ
իրանց սեպհական կոչումը։

Նորին Վեհափառութիւնը դարձին՝ այցելեց և Միաբանութեան
կրկին սեղսնատունները։

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ Տ. ՄԱԿԱՐ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ամսոյս 5 ին ի տօնի սրբոց Հարցն Եղիստացւոց կատարուեց և
Վեհափառ Տէր Մակար Արքազնագոյն Կաթուղիկոսի անուսնակո-
չութեան տօնը։

Ամսոյս 4 ին Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, եկեղեցւոյ
ուխտը Եկեղեցական սպասուք տեղի կալաւ Վեհարանի արտօքին
դրան մօտ, Վեհափառ Հայրապետը իջաւ Վեհարանից և շուրջառ,
խաչ գաւազան առնելուց յետոյ, սովորական թափօրով եկաւ Եկե-
ղեղի, Ո. Խօման սեղանի առաջ քաղեց, Ուրախ Եղէ, ոսղմասը

եւ և ի մէջ տաճարիս ։ աղօթքը ասելով սուրբ Աեղանին ՛ թիրապագելուց յետոյ կանգնեց յատկացեալ տեղը և կատարուեց նախատոհակ սրբոց Հարցն Եգիպտացւոց

Հետեւեալ օրը (5 ին), նախ քան սուրբ պատարագը բոլոր միաբանութիւնը և ձեմարանի աշակերտք խմբուեցին Վեհարանի Ընդդունելութեան գահինը ուր և իներկայութեան նորին Վեհափառութեան կատարուեց մաղթանիք ։ Մաղթանիքի ժամանակ Միաբանութեան և ձեմարանի կողմից մի մի ճառ կարգացուեց ։ յաւարտ՝ նորին Վեհափառութիւնը օրհնելով Միաբանութեանը ձեմարանի աշակերտներին և Հայոց ազգին՝ հետեւեալ խրառը հաճեցաւ խօսել առ Միաբանութիւնն և առ ներկայ գտեալն:

« Քոչ եմք զամենեցունց զջէնջ, զի վայելուչ կարգաւորութեամբ կատարեցիք զմաղթանաւ ։

« Մեր, որ զորբոց Հարցն Եգիպտացւոց կատարեմք զտօն և զնոցին կրօնաւորութեան ունիմք զկոչումն, հետեւող լեալ վարուց նոցին բանիւ սրբոյն Յովհաննու առաքելոյ և աստուածաբան աւետարանցի աղօթեցուք առ բարձրեալն Աստուած, զի նա

« Ուրախ լիցի ի՞բարւոք կրօնաւորութեան մերում ։ ինդասոցէ իսուրբ կեանս մեր ։ Հանգիցէ ի պարկեշտ վարս մեր ։ անհագ լիցի ի ժուժկալութեանս մերում ։ Հաճեցի ի միաբանութեան մերում ժամանացի ի զգաստութեան մերում ։ բերկրեսցի ի սիրելս մերում զնա ։ ոյժմ և միշտ և յաւխտեանս յաւխտենից ։ ամէն :

Հանդիսաւոր սուրբ պատարագից յետոյ, ժամը 1 ին յետ ճաշու միաբանութեան սեղանատանը ճաշեցին խուռն բազմութիւն հըրթաւիրելոց, և Գերապատիւ Սերովիէ Եսպիսկոպոս բարեմաղթութիւններ արեց նորին Մեծութեան Օգոստափառ Կայսեր Ալէքսանդր Ալէքսանդրովիկի կենաց և յաջողութեան, Վեհափառ Տ. Մակար Արքագիտագոյն Կաթողիկոսի բարօրութեան և երջանկութեան և Կաթուղիկէ Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի ու Հայոց ազգի յարատե հաստատութեան համար :

Այս բարեմաղթութիւնները ընդունուեցին սրտեռանդն ոգեսրութեամբ Յաւարտ սեղանին՝ բազմականքն ուրախ և զուարթ տպաւորութեամբ ցրուեցին ։ Երեկոյեան ճրագալոյց եղաւ :

Մաղթանքին կարգացուած ճառը.

ԱՍՏՈՒԾԱՐԵԱԼ ԱՐՔԱԶՆԱԳՈՅՆ ՔԱՀԱՆԱՑԱՊԵՏ.

Ի բարեպատեհ ժամուս յայսմիկ, գերաշխարհիկ իմն խնդութեամբ զմայլեալ սիրոք մեր և հոգիք՝ բերկրին ի հրձուանս անհուն ցնծութեան, սերիեանս խորհրդաւոր հանդէս տօնախմբութեան անուան 2երոյ ունելով առաջի. զի Վեհափայլ անուան Մեծի Աստուածապսակ Հայրապետիդ զանուանակիցն տօնելով այսօր՝ նոր իմն առիթ հոգենորոգ բերկրանաց սրտից յաւելումք ի մեզ. որով և զուարձացեալ ընդ հանդիսիս հանդիպումն՝ վերըստին համախմբեցաք աչա, առաջի Վեհափառ Հօրդ՝ հոգեզմայլ երգաք և գրուատիք յաւերժացուցանել զքաղցրագոյն յիշատակ անուանակոչութեան 2երոյ Աստուածընտիր Հայրապետ. զի եկեղեցի Քրիստոսի տօնախմբելով այսօր զփառաւոր յիշատակ Արքայ Հօրդն Ակարայ, նոր իմն ակենարկութեան բանայ զհանդէս ի շեղ, օրինակ առաքինութեան և հրեշտակական փարուց, 2եօք հեղուլ ի մեզ անհախանձաբար:

Քանիօն ուրեմն պարտ և պատշաճ իցէ մեզ, ցնծալ և խայտալի ժամուս, քանիօն բարեբաստիկս պարտիմք զմել համարել, տեսանելով զշեզ, համանման անուանակիցն 2երոյ լցեալ ուռժացեալ երկնային բարեօք, և պատրաստեալ հոգւով և մոօք յառաջադիմել զուիտս մեր և զորդիս Հայաստանեայց ի լուսաւորութիւն անդր Աւետարանական, Վասնորոյ, և մեզ օրս այս՝ օր հոգեկան մխիթմարութեան և 2եօք՝ օր ազգային տօնախմբութեան. և արդարե, զի՞նչ վեհ և հրաշափառագոյն քան զայս օր նորասրանչ, որոյ վասն ցնծութիւն բերկրապատար՝ որպէս ուղիս աստուածեզէն անձառապէս հոսի անսպառ ի սիրոս մեր. որով եկեղեցին Քրիստոսի, օր յառաջն տըլիրազգեցեալ ողբայր զիւրն այրիութիւն՝ այսօր շարժեալ ի հոգի ցնծութեան և բերկրալիր հրձուանաց՝ յիշատակաւ անուանակոչութեան Վեհափառ Փեսային իւրոյ՝ Հօրդ հասարակաց՝ զքան մարդարէին առեալ ի բերան անմուռնչ բարբառով երգէ, «Ցնծացաւ անձն իմ ի Տէր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուձան ուրախութեան, որպէս փեսայի եղ ինձ զպաակ, և որպէս հարսն զարդու զարդարեաց զիս»:

Ապաքէն, քանի՞ կրինակի խնդութեամբ լցեալ տարարադդ որդիքն Հայկայ, տարագրեալքն ընդ ամենայն տիեզերս, և սրտի մտօք աստ սլացեալ տօնախմբեն ընդ մեզ զանուանակոչութիւն նորապսակ Հայրապետիդ, և Քեպանծացեալ ինդան և բերկրին, և ընդ հովանեաւ Հայրապետական դրօշակի, որ այսօր աներեւութապէս ծածանի ընդ ոլորտս Հայաստանեայց աշխարհի՝ միացեալ ի սիրո և ի հոգի, և շաղկապեալ սիրով միութեան՝ օր նաբանեն զԱհենախնամ Տեսչութիւնն, որ չնորհեաց անտերունչ ազգիս Հայոց զՀայ. բրապետդ Մեծ, Եւ զի՞նչ դոյ այլ ևս տարարադդ որդւոցս Հայկայ՝ և Արամայ ի նախկին մեր բարեզպարդ ծոխութեանց, եթէ ոչ գահ Հայրապետական հոգեսոր իշխանութեան միայն, որ իլրե շուք իմն ազգայնութեանս մնայ

մինչ ցարդ՝ որով սփռվեալ անձկաւէտ սիրտք մեր՝ կամք յոգեխառնեալ ի մի յերջանկութիւն։ Գեղ վայելուչ և զուարթ բերկրութեան յիրաւի փայ. լին ի գէմս Սրբագումար Ժողովշյու և համայն հանդիսականաց. և որպէս զծաղկունս ի դաշտի ի ծագել արփւոյն՝ հոգենորոգ զուարթացեալ վերըն-ձիւղեմք զհրձուանս սրտից իրբե զփունջս անուշահոտ ծաղկանց առ Հայ-րապետդ Մեծ. և բուրմունք խնկոց սրտից մերոց հանգոյն ամպոյ ելեալ գի-զանան ի վեր յերկինս ի նշան գոհութեան զվերին Տեսչութենէն. որ ի խնամն իւր ընկալեալ զծեղին Եջման իւր՝ ցայսօր անդրդուելի պահեաց յան-ընդհատ յարձակմանց թշնամեաց և աշխարհաւեր արշաւանաց բարբարո-սաց և կողոպտիչ հարստահարութեանց նոցին։

Զ. ի՞նչ ուրիմն աստ համախմբելոցս պարտ իցէ առնել. Աթէ ոչ՝ շնորհա-պարտ զանձինս խոստովանեալ առ նախախնտումողն տիեզերաց՝ բարեմաղթել, զի և յայսմհետէ անդրդուելի պահեսցէ զիմունս Լուսաւորչեկրտ Տա-ձարիս փայլուն և շքեղ փառօք. յորում որդիք Հայաստանեայց մարզեալք ի կրթութիւնս վայելուչս՝ փայլեսցին որպէս որդիք արժանիք իննտասանե-բորդ լուսափայլ գարու. Խսկ զքեզ. ԱՇ Օծեալդ յԱստուծոյ Հայրապետ, փառաւոր արասցէ. երկայն աւուրբք լցուսցէ և ցուցցէ զփրկութիւն իւր», զի իրբե նոր իմն Մեսրովը և Սահակ հանդիսացեալ ի միջի մերում՝ բարձ-րացուսցես զպատիւ և զփառս ազգի և եկեղեցւոյ մերոյ,

Զերումդ Վեհափառութեան ամենախոնարհ որդի և նուաստա-գոյն միաբան Մայր - Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի

Նիկողայոս Շախեանց։

ՅՅԱ ԵՒ ՅՅԵԼՔ.

Թուս Արք. Օնթեստ. Յետի. լրաբում գոհութեամբ կարգում ենք. Նկա-րագիր Հայաստանեայց եկեղեցւոյ ժամանակակից վարչութեան. վերնա-գրով հետաքրքիր յօդուածը։

Թէև յօդուածի մէջ տեղ երեւումէ անհմտութիւն Հայ եկեղեցա-կան կարգաց և պատմական իրողութեանց. բայց ընդհանրապէս առնելով ամենայն համակրութեան արժանի է։

Վեհափառ Տ. Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոսի հաստատութիւնը առիթ ունենալով Թուս թերթը յիշեալ յօդուածը տպելիս՝ բարի ցան-կութիւն է ունեցել իւր ընթերցողներին ծանօթացնել Հայաստանեայցս եկե-ղեցու ժամանակակից վարչութեան հետ՝ պատմական տեսութեամբ անցելոյն։

Ա. Բիւր ամսաթերթի հետ շնորհակալութեամբ ստացանք Աղբիւրի 1885 թ. Գ. պրեմեայ և 2արաձնի Արամի Արկածները՝ գրքայկը. որ փո-խագրել է Ա. Արդգարեան. Տպագրութիւնը որչափ և վայելուչ է. սակայն լիւլուն ոչ այնքան. Խնչափէս երեւումէ. փոխագրողը լիզուի կանոնները և ոճերը շատ տեղ զոհէլ է մի միայն գրքոյկը ոտանաւոր անելու համար։